# Չալթրի պատմա-ազգագրական թանգարան այցելեցին շինարար գիտնականները



Երևանից Ռոստով ժամանած գիտնականները Դոնի պետական շինարարական համալսարանում "Կովկասը մեր ընդհանուր տունն է" միջազգային փառատոնին մասնակցելուց հետո Ռուսաստանի Դաշնության Հարավային և Հյուսիս-Կովկասյան օկրուգներում գլխավոր հյուպատոս Արարատ Գոմցյանի, Ռոստովի մարզի Օրենսդրական Ժողովի պատգամավոր, "Դոնի Ռոստովում Նոր Նախիջևանի հայկական համայնք" կազմակերպության նախագահ Հարություն Սուրմալյանի և Դոնի պետական շինարարական համալսարանի ռեկտոր Վլադիմիր Վագինի առաջնորդությամբ եկան Չալթր:

Հյուրերին դիմավորեցին Մյասնիկյանի շրջանի գլխավոր Արշակ Փորքշեյանը, շրջանի վարչապետի տեղակալ Նապիկ Քեշիշյանը և այլ պաշտոնատար անձինք: Նրանք միասին մտան Սուրբ Համբարձում եկեղեցի, մոմ վառեցին, ապա ուշադրությամբ լսեցին քահանա Տեր-Թադեոս Հայբարյանի պատմությունը Դոնում հայկական եկեղեցիների կառուցման մասին:

Շրջանային պատմա-ազգագրական թանգարանում պատվարժան հյուրերին դիմավորեց դիրեկտոր Անահիտ Դաղլդյանը և նրանց համար բավականին հետաքրքիր ու բովանդակալից էքսկուրսիա անցկացրեց: Շինարար գիտնականները ուշադրությամբ ունկնդրեցին էքսկուրսավարի պատմությունը Ղրիմից հայերի գաղթի և Դոն գետի ներքին ավազանում բնակավայրեր հիմնադրելու, Մյասնիկյանի շրջանի աշխատավորների առօրյա կյանքի ու ձեռք բերած հաջողությունների մասին: Հյուրերը առանձնահատուկ հետաքրքրությամբ դիտեցին թանգարանի ցուցանմուշները: Վերջում էլ ջերմ խոսքերով հագեցած սրտաբուխ գրառումներ կատարեցին այցելուների կարծիքների մատյանում:

Ապա շրջանի գլխավորի հետ միասին հյուրերը եղան Չալթրի "Անուշ" սրճարանում, որտեղ անցկացվում էր շրջանի երիտասարդության ավանդական դարձած ամենամյա հավաքը: Նրանք ջերմորեն շնորհավորեցին արարողության մասնակիցներին այդ հիշարժան միջոցառման առթիվ, ցանկացան առողջություն երջանկություն, բարօրություն, հաջողություններ ուսման մեջ և աշխատանքում:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ



*Նկարներում՝ շինարար գիտնականները, Մյասնիկյանի շրջանի գլխավոր Արշակ Փորքշեյանը, Ռուսաստանի Դաշնության Հարավային և Հյուսիս-Կովկասյան օկրուգներում Հայաստանի Հանրապետության գլխավոր հյուպատոս Արարատ Գոմցյանը և Չալթրի Սուրբ Համբարձում եկեղեցու քահանա Տեր-Թադեոս Հայբարյանը Չալթրի թանգարանում:*

Լուսանկարները Ա. ՄԻՐՈՒՔՅԱՆԻ







*Նկարներում՝ թանգարանի այցելուների կարծիքների մատյանում գրառումներ են անում Դոնի պետական շինարարական համալսարանի ռեկտոր Վլադիմիր Վագինը, Հայաստանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի ռեկտոր Գագիկ Գալստյանը և Հայաստանի պոլիտեխնիկական պետական համալսարանի պրոռեկտոր Միքայել Հարությունյանը:*

Լուսանկարները՝ Ա. ՄԻՐՈՒՔՅԱՆԻ


## ՍԻՐԵԼԻ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐ, շարունակվում է "Զարյա" թերթի բաժանորդագրությունը 2015 թվականի 1-ին կիսամյակի համար:

**Բաժանորդագրվել դուք կարող եք փոստատարների մոտ, գյուղերի կապի բաժանմունքներում կամ թերթի խմբագրությունում: Վեց ամիս ժամկետով բաժանորդագրության գինը կազմում է 348 ռուբլի 42 կոպեկ:**